ՏԵՍԱԿԵՏ

ԱՆՍԱԿԱՐԿԵԼԻ ՊԱՀԵՆՔ ՀԱՅՈՑ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՆՈՒՆԸ

այաստանի Հանրապետության գիտությունների ազգային ադեմիան, համաձայն իր անադրության, հայտարարել է ԳԱԱ թղթակից–անդամների ություններ՝ տարբեր նագիտությունների գծով յաստանի Հանրապետություն», սուլիսի 2000 թ.): Որոշ անակ անց «Գիտություն» թում հրապարակվել է նաև ակներն այն մարդկանց, ովքեր կամ այն մասնագիտության լ առաջադրվել են րարարված թափուր տեղերում նտրվելու համար: Նայում ես ակներին և ապշում. ֆիզիկայի տեղի համար դիմել են 21 յածուներ, պատմության երկու համար՝ 17, գրականության, արանության և նտրագիտության երեք տեղի ար՝ 23, և այսպես շարունակ՝ -երկու տեղի համար կրկին 17, գյուղատնտեսություն, ննիկական գիտություններ) և

Տպավորությունն այնպիսին է, մարդիկ ուղղակի կամեցել են յց անունները տեսնել ցուցակ- ում՝ գոնե պատրանք ստեղծելու ար: Իսկ թե ի՞նչ կարծիքի են սպապը, հասարակությունը՝ չէ:

Ինչո՞ւ է այսպես ստացվել, ո՞րն յատճառը՝ ընդամենը 24 տեղի ար դիմել են 179 մարդ: Իրո՞ք քան արժանավորներ կան, թե՞ րահեղությունների ծողովուրդ , և մեկը մյուսին նայելով՝ ա- ց գիտական ու բարոյական ափանիշների՝ խնդրել են գիտխոր- դների նախագահներին կամ ա- ծին ակադեմիկոսների առա- րկելու իրենց թեկնածությունը:

Շատ փխուր իրողություն է, և ննին պատիվ չի բերում ո՛չ յին ակադեմիային, ո՛չ խոր- դներին, ո՛չ այն ակադեմիկոս- ին, ովքեր չկարողանալով ընդ- ել կամ «խաթրից չանցնե- » առաջադրել են անգամ գիտ- թյունների կողմից մերժվածնե- : Իսկ ամենից առավել՝ պատիվ չի բերում այն դիմողներին, ովքեր, անտեսելով գիտության մեջ համա- րում ու հեղինակություն ունեցող ի- րենց գործընկերներին, նրանց կող- քին հայտնվել են և իրենք՝ ման- րացնելով ու էժանացնելով մեծ նպատակը:

Իհարկե, ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵ- ՄԻԱՅԻ և նրա նախագահության մեղքն է, որ ամեն ոք կարծում է, թե ինքն էլ կարող է մուտք ունե- նալ այնտեղ՝ առանց լուրջ վաս- տակի և գիտական երկարամյա ուղու: Եթե մեկը մի կերպ հասցրել է դոկտոր դառնալ, այսօր ցուցակ է մտել, քանզի նախորդ ընտրութ- յունների փորձն արդեն համոզել է, որ կարող են արժանավորները դուրս մնալ, իսկ նրանցից շատ պակաս վաստակ ունեցողները՝ չգիտես ինչ հնարքով ընտրվել գի- տության կաճառում:

Հայտարարության մեջ, թա- փուր տեղերի ցանկից անմիջապես հետո, առաջին նախադասությունը հուշում է. «Համաձայն ՀՀ ԳԱԱ օ- րինադրության, ՀՀ ԳԱԱ թղթա- կից–անդամ ընտրվում են այն գիտնականները, ովքեր գիտությու- նը հարստացրել են առաջնակարգ գիտական նշանակություն ունեցող աշխատանքներով»: Իսկ ո՞վ է ո- րոշում այդ «առաջնակարգ գիտա- կան նշանակություն ունեցող աշ- խատանքների» որակն ու գինը: Եվ ի՞նչ չափանիշներով է որոշում: Փորձը ցույց է տվել, որ այստեղ դեր ունեն հաճախ սուբյեկտիվ կա- մայական մոտեցումները, երբեմն նաև՝ խնամիական–արյունակցա- կան կապերը:

Մենք ամենևին հավակնություն չունենք շատ մասնագիտություննե- րի գծով կտրուկ եզրահանգումներ անելու: Մեզ ավելի մոտ են հասա- րակագիտական բնագավառները: Այդ ինչպե՞ս են պատմաբաններին կամ գրականագետներին թվարկե- լու տնտեսագետները կամ փիլիսո- փաները: Լեզվագետ կամ արվես- տաբան ակադեմիկոսները որքա- նո՞վ են իրավասու «դատավճիռ» կայացնելու տնտեսագետներին:

Եվ այսպես, մյուս գիտություն- ների պարագայում: Ո՞վ է մոգոնել այս շփոթը: Մի՞թե հնարավոր չէ նեղ մասնագիտական տարբերակ- ներ սահմանել, որոնցով, թերևս, պատահականությունները ու «չար խաղերը» նվազագույնի կհասնեին: Չէ՞ որ միայն Գևորգ Ջահուկյանը, Սերգեյ Աբրահամյանը, Էրիկ Աթա- յանը կարող են ճշգրիտ ընտրութ- յուն կատարել, թե ով է արժանա- վոր լեզվաբանը: Թող թեկուզ երեք հոգով կատարվի ընտրությունը, բայց կկատարվի անհամեմատ ա- վելի արդար, քան եթե լեզվաբանին ընտրի տնտեսագետը կամ պատ- մաբանը:

Մեր կարծիքով, լավագույն տարբերակը կլինի մի շարք չափո- րոշիչների սահմանումը.

ա. դոկտո՞ր է՝ տարիների կամ տասնամյակների համար այսքան միավոր,

բ. պրոֆեսո՞ր է՝ ո՞ր թվակա- նից՝ այսքան միավոր,

գ. քանի՞ և ինչպիսի՞ մենագ- րություններ է գրել (որակի խնդի- րը թողնել քվեարկող զուտ մասնա- գետ ակադեմիկոսների խղճին, թող նրանք սահմանեն միավորները), ժամուլի հաշվարկով հատկացնել միավորների որոշակի քանակ,

դ. յուրաքանչյուր ակադեմիկոս պարտավոր է գիտական կադրեր պատրաստել, ակադեմիկոսության հավակնորդը քանի՞ գիտության թեկնածու է աճեցրել, յուրաքանչ- յուրի համար այսքան միավոր,

ե. քանի՞ տարի է բուհական համակարգում աշխատել՝ այսքան միավոր և այլն:

Հնարավոր է մեր առաջարկու- թյունները սպառիչ չեն կամ պայ- մանական են: Թող ակադեմիայի նախագահությունը սահմանի իր



չափանիշները: Բայց մի բան խիստ որոշակի է, շատերի ախոր- ժակները զսպելու, իսկ ընտրող սու- բյեկտների կամայականությունները վերացնելու միակ ուղին դա է:

Լեզվագետ Հովհաննես Բարսե- ղյանը տեսնելով, որ իր երբեմնի ուսանողները՝ թվով 9 հոգի, դիմել են նույն տեղի համար, որի արժա- նավորագույն թեկնածուն ինքն էր, կամովին հեռացել է մրցույթից: Բայց, ահա, ցուցակում կողք–կող- քի շարված են նրանց անունները, ովքեր երևի չեն էլ կասկածում, թե ինչ բարոյական հարված են հասց- նում վաստակաշատ իրենց դասա- խոսին, ի վերջո՝ ակադեմիային:

Բալային համակարգը կզսպեր ցուցակում հայտնված բոլոր լեզվա- գետներին, քանզի նրանցից շատե- րը դոկտոր են սոսկ իրենց համար, մյուս մասը դեռևս շատ պետք է ջանա հավակնորդ լինելու համար:

Պարզից էլ պարզ է, որ անհա- մեմատ կհեշտանային ընտրութ- յունները, եթե գործեր որոշակի հա- մակարգ, միավորները իրենքին հստակորեն ցույց կտային, թե ով է աղյուսակի վերին սանդղակում և ոչ մի ակադեմիկոս չէր փորձի իր քվեն տալ պակաս միավորներ ու- նեցող որդուն, աղջկան, խնամուն կամ բարեկամին: Այն ժամանակ հասարակական կարծիքը, ինչո՞ւ չէ, նաև իրավական պատասխա- նատվությունը կարգելակեին ամեն մի կամայականություն և աչառու վերաբերմունք:

Այս մասին պետք է լուրջ մտահոգվի ակադեմիայի նախա- գահությունը:

Չի կարելի շարունակել խիստ տնայնագործական, սուբյեկտիվ ու կամայական գործոններ ծնող նախկին ընտրանքը: Հստակ չա- փորոշիչների սահմանումը և նոր համակարգի անցումը, որոնք կնպաստեին ամեն տեսակի սուբ- յեկտիվիզմի բացառման, հասու- նացած խնդիր է: Կարծում ենք՝ ե- թե մինչև ընտրությունները մշակ- վեին և կիրառվեին այդ սկզբունք- ները, կկանխվեին շատ անարդա- րություններ և անսակարկելի կդառնային ակադեմիայի անունն ու պատիվը:

ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ ժո- ղովրդի հոգևոր ու գիտական կյան- քի գերագույն ցուցաչափն է: Անհ- րաժեշտ է իր կոչման բարձունքում պահել այն և դռները բացել միայն գիտության նվիրյալների առջև:

Ռոբերտ ԿԱՐԱՅԱՆ,
արձակագիր, հրապարակախոս
Գևորգ ԱՂԱՋԱՆՅԱՆ,
բանաստեղծ
Ալբերտ ԲԱՐՍԵՂՅԱՆ,
պատմական գիտ.թեկնածու,
դոցենտ